ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

Շրջակա միջավայրի կամ բնապահ-պանների համաշխարհային օր
ամեն տարի աշխարհի տարբեր անկյուններում նշում են յուրովի

02

Հաճախ խորհրդավոր, երբեմն՝ հանելուկային, բայց մշտապես
շատ հետաքրքիր քիմիկոսի մասնագիտությունը մեզ ուղեկցում է ամբողջ կյանքում

08

Հայաստանը 2026թ. կհյուրընկալի
բնապահպանական ամենակարևոր իրադարձություններից մեկը՝
COP17-ը

10

ԸՆԴԵՐՔԻՑ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

ZCMC
ԶԱՆԳԵԶՈՒՐ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ

№52
2025թ

ԱՔԱՆԱՎՈՐԻՐ ՕՐ ԿՈԴԸ՝ ԲԵՌՆԻՐ №52
ԱՄՍԱԳՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Շրջակա միջավայրի համաշխարհային օր

«Մոլորակը բոլոր մարդկանց միակ և անփոխարինելի տունն է...»

ՀՈՒՆԻՍԻ 5-Ը

շրջակա միջավայրի համաշխարհային օրն է

Շրջակա միջավայրի համաշխարհային օրվա առթիվ ՀՊՄԿ-ի արհեստակցական կազմակերպությունը շնորհավորեց Ընկերության բնապահպաններին, հանձնեց խորհրդանշական նվերներ՝ ևս մեկ անգամ կարևորելով ոլորտում կատարված բարեփոխումները և բնապահպանների դերը շրջակա միջավայրի պահպանության գործում:

Շրջակա միջավայրի կամ բնապահպանների համաշխարհային օրն ամեն տարի մոլորակի տարբեր անկյուններում նշում են յուրովի՝ ևս մեկ անգամ ընդգծելով բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքը:
Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բնապահպանները ողջ տարին ակտիվ համագործակցել են

ազդակիր համայնքների 10 կրթօջախների 400 դպրոցականների հետ՝ բացատրելով և ընդգծելով Երկիր մոլորակի նկատմամբ մարդու վերաբերմունքի կարևորությունը:

ՀՊՄԿ բնապահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Արծվին Ծատրյանի խոսքերով կոմբինատի բնապահպանության բաժինն ամենօրյա կտրվածքով մի շարք գործառույթներ է իրականացնում՝ մոնիթորինգ, թափոնների կառավարում, ջրերի վերահսկողություն և դրանց որակի, բերրի հողի շերտի ճիշտ կառավարում, օգտագործում և այլն: «Այս տարի սկսել ենք ծրագիր, որի միջոցով իրազեկում ենք շրջակա միջավայրի կարևորությունը ազդակիր համայնքների մանկապարտեզներում, դպրոցներում և կրթական այլ հաստատություններում: Մեր աշխատակիցները պատվով հանդես են եկել և բավականին լավ ներկայացրել են թե՛ խնդիրները, թե՛ դրանց լուծման ուղիները, և կարող եմ ասել, որ իրազեկման այդ աշխատանքը արդյունավետ է, քանի որ դրական փոփոխությունները երիտասարդ սերնդի վարքագծում նկատելի են»,- ասաց նա:

«Սրտանց շնորհավորում եմ բոլորիս շրջակա միջավայրի պահպանության օրվա կապակցությամբ: Մաղթում եմ ակտիվ գործունեություն, շարունակեք ձեր աշխատանքներն այնպես, ինչպես մինչև հիմա իրականացրել եք: Ձեր աշխատանքը առաքելություն է, որի արդյունքները քաղում ենք

բոլորս»,- շեշտեց ԶՊՄԿ արհեստակցական կազմակերպության նախագահի տեղակալ Արթուր Պապյանը:

Առջևում կոմբինատի նորանոր ծրագրերն են, որոնք կոչված են նվազեցնելու շրջակա միջավայրին հասցվող հնարավոր ազդեցությունները:

Միջազգային տոնի օրը Քաջարանի «Գտնված երազ» մանկապարտեզի սաները հրաժեշտ տվեցին հարազատ կրթօջախին՝ ավարտական հանդեսով: Իսկ բնապահպանի օրվա խորհուրդը երեխաները նշանավորեցին՝ մանկապարտեզի այգում կոմբինատի բնապահպանների հետ

ծառատունկի մասնակցելով: Բնապահպանները, որոնք վստահ են, որ շրջակա միջավայրի նկատմամբ վերաբերմունքը և հոգատարությունը սկսվում է ընտանիքից, մանկապարտեզից և դպրոցից: Նրանք օգնեցին երեխաներին ծառեր տնկել՝ միաժամանակ բացատրելով, որ մոլորակը բոլոր մարդկանց միակ և անփոխարինելի տունն է, որի նկատմամբ բոլորս՝ անկախ տարիքից, մեր ամենօրյա կյանքում պետք է հոգատար լինենք:

Հեղինակ՝ Հերմինե Միքայելյան

Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր **Շրջակա միջավայրի համաշխարհային օրվա կապակցությամբ տեսանյութը**

Սյունիքի հանքարդյունաբերության ոլորտի գիտահեն դարբնոցը

Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր **ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում սեմինար-հանդիպման մասին տեսանյութը**

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն ակտիվ համագործակցում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ: Այս անգամ սեմինար-հանդիպում կազմակերպվեց ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի ուսանողների հետ: Քննարկման առանցքում Հայաստանի հանքարդյունաբերությունն էր՝ աշխարհի հետ համեմատության մեջ, ոլորտի հնարավորությունները, դրա մարտահրավերները, սոցիալական պատասխանատվությունը, ինչպես նաև հանրության շրջանում ձևավորված թյուր կարծրատիպերը:

Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության նախագահ, ԶՊՄԿ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանը ներկայացրեց հանքարդյունաբերության գլոբալ միտումները, ԶՊՄԿ-ի տեղն աշխարհի հանքարդյունաբերական քարտեզում և ընդհանուր առմամբ՝ հանքարդյունաբերության դերն ու նշանակությունը, ինչպես համաշխարհային, այնպես էլ՝ Հայաստանի տնտեսության համար:

«2050 թվականին պղնձի շուկան

լինելու է տրիլիոնից ավելի՝ 1.1 տրիլիոն դոլարի չափ, այսինքն՝ այսօրվա պղնձի շուկայից հինգ անգամ ավելի մեծ, իսկ նավթի շուկան նվազելու է մոտ չորս անգամ: Ըստ այս սցենարի՝ մոտ 25 տարի հետո պղինձն ավելի կարևոր և մեծ դեր է ունենալու համաշխարհային տնտեսության մեջ, քան նավթը»,- շեշտեց նա:

ԶՊՄԿ ներկայացուցիչները շրջեցին համալսարանի գիտափորձարարական լաբորատորիաներում

ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրենի ՈՒՄԱ և ՄՀ գծով տեղակալ Տիմեյա Աղամյանը նշեց, որ ԶՊՄԿ-ի հետ համագործակցությունը համալսարանի համար կենսական նշանակություն ունի: **«Այս կրթօջախը Սյունիքի հանքարդյունաբերության ոլորտի գիտահեն դարբնոցն է, որտեղ կրթություն են ստանում ոլորտի ապագա կադրերը, որոնք զարգացնելու են մարզի ու հանրապետության հանքային ընկերությունները»,- ասաց Տիմեա Աղամյանը:**

Սեմինարն ընթացավ ակտիվ հարցուպատասխանով: Բանախոսները լսարանից ստացան բազմաթիվ հարցեր, ինչը խոսում է հանքարդյունաբերության նկատմամբ հետաքրքրվածության և մարզում այս ոլորտի կարևորության գիտակցման մասին: Պոլիտեխնիկցիները չթաքցրեցին՝ ձեռնարկությունը տարածաշրջանում դիտարկվում է որպես խոշոր ու գրավիչ գործատու:

Կոմբինատի կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանն իր խոսքում ընդգծեց, միայն 2023-24թթ. կոմբինատը շուրջ 17 միլիոն դոլարի ներդրում է կատարել սոցիալական ոլորտում. 35%-ը՝ Կապանում, 28%-ը՝ Քաջարանում, 24%-ը՝ հանրապետական մակարդակում, 13%-ը՝ մարզի այլ համայնքներում: Նա ներկայացրեց նաև բնապահպանական, աշխատանքի անվտանգության, կոմբինատի տեխնիկական վերազինման ուղղությամբ իրականացված ծրագրերը:

Համալսարանի հյուրերը շրջեցին լսարաններում և գիտափորձարարական լաբորատորիաներում, ծանոթացան ուսումնամեթոդական նյութերին, սարքավորումներին: Նրանց զարմացրեց, որ կրթօջախը կարողացել է գործուն վիճակում պահպանել դեռևս խորհրդային տարիներից մնացած սարքավորումները, և սիրով ու խնամքով պահպանվող ցուցանմուշային միներալների հավաքածուները:

Ուսումնավարժանք Պայմանական վթար՝

պոչատար խողովակաշարում. մարզային փրկարարական վարչության հետ անցկացվել են ուսումնական վարժանքներ

Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր **Ուսումնավարժանքի մասին տեսանյութը**

ՀՊՄԿ-ից պայմանական ահազանգը ստանալուն պես «վթարի» վայր էին մեկնել Սյունիքի մարզային փրկարարական վարչության մի քանի մարտական հաշվարկներ: Բարեբախտաբար, մաշված խողովակի վթարը պայմանական էր, իսկ գործողությունները՝ ուսումնավարժանքի սցենար:

Մարզային փրկարարական վարչությունն ամեն տարի պարտադիր ուսումնական վարժանքներ է իրականացնում արդյունաբերական ձեռնարկությունների հետ: Պայմանական վթարն այս անգամ ՀՊՄԿ-ի պոչատար խողովակում էր: Ուսումնավարժանքին ներգրավված էին մի քանի խմբեր:

«Տարվա ընթացքում յուրաքանչյուր արտադրական ձեռնարկությունում նախատեսված է առնվազն մեկ անգամ անցկացնել այսպիսի հատուկ տակտիկական ուսումնավարժանքներ»,- նշեց ՀՀ ՆԳՆ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ **Արմեն Ավագյանը:**

Պայմանական վթարը տեղի էր ունեցել Կապանից մոտ 12 կմ հեռավորության վրա: Այնտեղ, որտեղ բարձր ճնշման պոչատար խողովակաշարն անցնում է դյուկերային անցումներով և բարդ թեքություններով: Ուսումնավարժանքի մասնակիցներն ընդգծում են, որ այսպիսի ուսումնավարժանքները խիստ կարևոր են՝ բոլոր ռիսկերը գնահատելու և անհրաժեշտության դեպքում ճշգրիտ գործելու համար:
ՀՊՄԿ պոչամբարային տնտեսության պետ Միեր Գևորգյանն ընդգծեց է, որ ոչ մեկը վթարներից ապահովագրված չէ. «Սուտ կլինի, եթե ասենք, որ վթար չի լինում, բայց մեր խմբով՝ եռակցողներով, փականագործներով, ամեն րոպե՝ թե՛ եղանակային տարբեր պայմաններում, թե՛ գիշեր-ցերեկ, միշտ կազմ և պատրաստ ենք»,- ասաց նա:

Տարիներ շարունակ համագործակցելով փրկարարների հետ՝ ՀՊՄԿ պոչամբարային տնտեսության վթարավերականգնողական խումբն այնքան է հմտացել, որ ցանկացած վթարային իրավիճակներում կարողանում է արագորեն կողմնորոշվել և ճիշտ ու արագ քայլեր ձեռնարկել: Նրանք աշխատում են 24/7 ռեժիմով:

ՀՀ ՆԳՆ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ Արմեն Ավագյանի խոսքերով՝ բարեբախտաբար, վերջին տարիներին նման ահազանգեր չեն ստացել, այսպիսի իրավիճակների իրենք հիմնականում հանդիպում են միայն ուսումնավարժությունների ժամանակ:

Ինչպիսի՞ գործողություններ են նախատեսվում, ասենք, պոչատարի վթարի դեպքում. վարժանքի մասնակիցները մանրամասն դիտարկեցին բոլոր հնարավոր քայլերը:

Եվ այսպես, նման վթարի ահազանգի դեպքում, պոչանքը նախ ուղղվում է պահուստային պոչատար կամ ավազան: Այդ ընթացքում եռակցողները հասցնում են արագությամբ վերացնել խնդիրը: **Միեր Գևորգյանի** խոսքերով, համակարգված աշխատանքի շնորհիվ իրենք կարողանում են շրջակա միջավայրին հնարավոր վնասը հասցնել նվազագույնի:

«Անընդհատ կատարվում են խողովակի պատերի հաստության ստուգաչափումներ, և որոշվում է՝ որտեղ պետք է ամրացումներ կատարվեն: Կառուցվել են վթարային ավազաններ, որպեսզի վթարի դեպքում պոչանքը անմիջապես ուղղորդվի դեպի վթարային ավազան»,- եզրափակեց Գևորգյանը:
Անգամ եղանակային վատ պայմանները չեն խանգարում ուսումնավարժանքին: Աշխատանքներում ներգրավվել էին ՀՊՄԿ-ի լեռնափրկարարները, վթարավերականգնողական խումբը, Քաջարանի հրշեջների խմբերը և մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը:



Ռոյալթին մետաղական օգտակար հանածոների օգտագործումը փոխհատուցելու նպատակով, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացումից ստացվող բարձր շահութաբերության համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող հարկ է:

Սուրեն Պարսյան
Տնտեսագետ

Ռոյալթի վճարողներ են համարվում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործող և (կամ) մետաղի խտանյութ արտադրող հանդիսացող կազմակերպությունները: Ռոյալթիի հաշվարկման բազա է համարվում հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված՝ հանքարդյունաբերության արտադրանքի իրացումից հասույթը՝ առանց ավելացված արժեքի հարկի (հանքարդյունաբերության արտադրանք է համարվում մետաղի խտանյութը):

Ռոյալթին հաշվարկվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար՝ ելնելով ռոյալթիի հաշվարկման բազայից և օրենքով սահմանված կարգով որոշվող դրույքաչափից:

Տնտեսագետ Սուրեն Պարսյանի խոսքերով, Հայաստանում հանքարդյունաբերական գործունեությունը հիմնականում կապված է մետաղների արդյունահանման հետ: Համաշխարհային շուկայում վերջիններիս գներից կախված՝ ռոյալթիի վճարները կարող են ավելանալ և պակասել, բացատրում է տնտեսագետը: Վառ օրինակը հենց ԶՊՄԿ-ի 2024 թվականի վճարումներն են, մասնավորապես՝ 2024-ին վճարել է շուրջ 102 միլիարդ դրամի չափով հարկեր, որից 68 միլիարդը՝ այլ հարկերն են, այդ թվում հիմնականում՝ ռոյալթին: Այս վճարները հաշվարկվել են՝ ելնելով համաշխարհային շուկայում մետաղների բարձր գներից:

Օրենքով սահմանված է, թե հանքարդյունաբերական ընկերության վճարած ռոյալթին ինչպես պետք է բաշխվի: 2025-ի հունվարի մեկից ուժի մեջ մտած փոփոխությունների շնորհիվ դրա 2%-ը հատկացվում է համայնքներին, որից 1%-ը պարտադիր՝ ազդակիր համայնքներին:

Արծվանիկում լուծվում է խմելու ջրի խնդիրը՝ ռոյալթիից մասհանումների ծրագրի շնորհիվ

Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր **Արծվանիկի ջրագծի վերաբերյալ տեսանյութը**

Արծվանիկցիների համար խմելու ջուրը տասնամյակներով չլուծված խնդիր էր: Հիմա վերջապես այդ խնդիրը լուծվում է՝ մշտական խմելու ջուր կունենան բոլոր բնակիչները: Կենարար հեղուկը բնակավայրի տարբեր հատվածներ կմղվի պոմպերով, որոնց աշխատանքը կապահովի 40 կվ/ժ հզորությամբ արևային կայանը: «Արծվանիկցիները մեծ ոգևորությամբ են հետևում ջրագծի կառուցման աշխատանքներին, որի 70%-ն արդեն կատարված է,- ասում է աշխղեկ **Շահեն Հակոբյանը:** -«**Տեղանքը բավականին բարդ է՝ ժայռոտ, առավոտյան շատ վաղ սկսում ենք՝ ժամը 8-ից մինչև երեկոյան 8-ն անդադար աշխատում ենք, ամեն ինչ անում ենք, որ նախատեսված ժամկետում ավարտենք: Կունենանք 9 կիլոմետրանոց հիմնական ջրագիծ, 30 հազար մետրանոց բարակ խողովակաշար: Ուսումասիրել ենք՝ ջրի հոսքը կբավարարի, մի բան էլ ավելի լավ կլինի, քան սպասում ենք»:**

Ծրագիրն իրականացնում է Կապանի համայնքապետարանը: Գումարի մեծ մասն ազդակիր բնակավայրերին տրվող ռոյալթիի մասհանումից է: Համայնքում մի շարք գյուղեր ազդակիր են թե ԶՊՄԿ-ին, թե Կապանի լեռնահարստացման կոմբինատին, հետևաբար մարզկենտրոնը երկու ձեռնարկությունների ռոյալթիից էլ մասհանում է ստանում, ընդ որում 2024 թվականի համար ռոյալթիի մասնահանման տեսակարար կշիռը համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտների մեջ կազմել է 9,7 %:

Կապանի համայնքապետարանի տնտեսական զարգացման և արտաքին կապերի բաժնի պետ Հասմիկ Ղոնյանը նշում է, որ Արծվանիկում Կապան համայնքը ջրագծի երկու ծրագիր է իրականացնում, մեկը՝ համայնքների սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրով, մյուսը՝ ռոյալթիի մասհանումների ծրագրով: Երկրորդ ծրագիրն ավելի մեծ է՝ 325 միլիոն դրամի ծավալով, որից 251 միլիոն դրամը ռոյալթիի մասհանումն է:

Հասմիկ Ղոնյան
տնտեսական զարգացման և արտաքին կապերի բաժնի պետ

Կապանի համայնքապետարանում խոշոր ծրագիր է իրականացվելու նաև 2025 թվականի համար արված ռոյալթիի մասհանումից, ընդ որում այս տարվա համար մարզկենտրոնին տրվող գումարը 2024-ի համեմատ կրկնակի է լինելու: Հասմիկ Ղոնյանի խոսքերով, 2025-ին նախատեսում են իրականացնել կարևոր ծրագիր համայնքի համար՝ կառուցվելու է մեքենասարքավորումների տեխնոպարկ՝ շուրջ 800 միլիոն դրամի ծախսով, որից 522 միլիոն դրամը կլինի ռոյալթիից մասհանումները: Նշենք, որ համայնքը երբեք սեփական մեքենասարքավորումների պարկ չի ունեցել և դա համարվում է առաջնահերթ խնդիրներից մեկը:

Հեղինակ՝ Տիգրանուհի Բաղալյան

Արման Ոսկանյան
ԶՊՄԿ քիմիական լաբորատորիայի ղեկավար

ՔԻՄԻԿՈՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏՈՆԸ. ՄԱՅԻՍ 25

Հաճախ խորհրդավոր, երբեմն՝ հանելուկային, բայց մշտապես շատ հետաքրքիր քիմիկոսի մասնագիտությունը մեզ ուղեկցում է ամբողջ կյանքում և հնարավոր բոլոր ոլորտներում: Մենք ապրում ենք քիմիայի դարաշրջանում՝ յուրաքանչյուր տեղ հանդիպելով քիմիական արդյունաբերության արտադրանքի, որի պատրաստման մեջ հիմնական դերը հենց քիմիկոսներինն է:

Մայիսի 25-ն ամբողջ աշխարհում նշվում է որպես քիմիկոսների օր: Այն տարբեր երկրներում տարբեր կերպ է նշանավորվում, նույնիսկ եղել են դեպքեր, երբ այդ օրվա հերոս է հռչակվել որևէ քիմիական տարր:

Տոնի առթիվ ԶՊՄԿ-ի քիմիական լաբորատորիայի աշխատակիցներն ընդգծում են իրենց մասնագիտության կարևորությունը և արդիականությունը՝ սեփական փորձով ոգևորելով երիտասարդներին: Մասնագիտական տոնը միշտ նշում են՝ ևս մեկ անգամ կարևորելով գիտությունը և ոլորտի մասնագետներին: Կոմբինատի քիմիական լաբորատորիայի 107 աշխատակիցներին է վստահված փորձանոթների հետ աշխատելու պատասխանատու գործը: Մասնագետները որոշում են հարստացուցիչ ֆաբրիկայից բերված նմուշներից 34 քիմիական տարրի և ոսկու պարունակությունը:

Լաբորատորիայում ամենօրյա աշխատանքով ձգտում են նվազեցնել մարդ-նյութ շփումը: Վերջերս վերազինվել են նորագույն սարքերով, դրանց շնորհիվ այսուհետ ձեռքի տակ կունենան նաև շրջակա միջավայրի վերաբերյալ սեփական ուսումնասիրության արդյունքները: «Նոր սարքավորումները հիմնականում թույլ կտան ավելի ճշգրիտ որոշել շրջակա միջավայրի ցուցանիշները, անալիզները, օդի որակը կամ ջրի մեջ մետաղների պարունակությունը, նաև թույլ կտան ճիշտ գնահատել ռիսկերը»,- նշում է ԶՊՄԿ քիմիական լաբորատորիայի ղեկավար Արման Ոսկանյանը:

«Սկզբից, երբ ընտրեցի մասնագիտությունս, իհարկե, չէի պատկերացնում՝ ինչ աշխատանք է ինձ սպասվում, բայց հետո հասկացա, որ բավականին հետաքրքիր է լինելու: Մեր առօրյան է, մեր կյանքն է քիմիան: Ամեն տեղ կա քիմիա, ուղղակի պետք է շատ ուշադիր աշխատել: Քիմիան չի սիրում շեղումներ, քիմիան սիրում է ճշգրտություն»,- ասում է ավագ լաբորանտ Նաիրա Սարգսյանը:

Մարինե Հակոբջանյանը 30 տարվա աշխատանքային փորձի շնորհիվ կարողանում է հոտառությամբ առանձնացնել թթուները: «Ազոտականը, աղաթթուն, ծծմբականը՝ տարբեր խառնուրդներով ենք աշխատում: Աշխատել եմ բոլոր բաժիններում, - պատմում է նա,- իսկ վերջին 20 տարին՝ պատրաստի արտադրանքի անալիզի բաժնում: Միևնույնն է, որտեղ էլ աշխատել եմ, ինչ մեթոդ էլ կիրառվել է՝ քիմիան հետաքրքիր է ցանկացած դեպքում»:

Երիտասարդ լաբորանտ Սրբուհի Սահակյանը գիտելիք և հմտություն ձեռք է բերել տեղում՝ ավագ գործընկերներից: «Պարտավոր չես սիրել քիմիան, բայց ընտրածդ աշխատանքը պետք է լավ կատարես: Հեռու էի քիմիայից, չէի սիրում դպրոցում, բայց արդեն աշխատելով՝ սկսեցի սիրել, խորհուրդ կտամ բոլորին՝ սիրել քիմիան: Կյանքում իրենց հաստատ պետք է գալու այս առարկան»,- ընդգծում է նա:

Եթե քիմիական լաբորատորիային մեծ մասամբ կանացի ձեռքեր են հարկավոր, ապա նույնը չի կարելի ասել ոսկու հարգորոշման բաժնի մասին: 9 տղամարդկանցից բաղկացած կոլեկտիվը փուլ առ փուլ, ջերմային տարբեր մշակումների ենթարկելով, որոշում է հանքաքարում ոսկու պարունակությունը: «Անկախ ամեն ինչից, թե մարդը որտեղ է աշխատում, պիտի առաջին հերթին սիրի իր աշխատանքը, պահպանի անվտանգության բոլոր կանոնները»,- ասում է ՀՊՄԿ քիմիական լաբորատորիայի ոսկու հարգորոշման բաժնի ինժեներ Գոռ Թադևոսյանը:

Քիմիկոսների տոնի առթիվ կոմբինատի լաբորատորիայի աշխատակիցները շնորհավորանքներից բացի՝ հորդորում են անտարբեր չլինել իրենց մասնագիտության հանդեպ, ընտրել, սովորել ու սիրել, այն ոչ միայն հետաքրքիր է ու գեղեցիկ, այլ նաև աշխատաշուկայում շատ պահանջված է:

Հեղինակ՝ Հերմինե Միքայելյան

Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր
ՀՊՄԿ քիմիական լաբորատորիայի մասին տեսանյութը



Կովկասյան ազնիվ եղջերու
Գրանցված է
ՀՀ կարմիր գրքում

Հայաստանն ընտրվել է

որպես ՄԱԿ-ի Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (COP17) հյուրընկալող երկիր

Կոլումբիայի Կալի քաղաքում ընթացող ՄԱԿ-ի Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 16-րդ համաժողովի ընթացքում (31.10.24) Հայաստանն ընտրվել է որպես կողմերի 17-րդ համաժողովի հյուրընկալող երկիր:

Այս ընտրությունը վերահաստատում է միջազգային հանրության աճող վստահությունը Հայաստանի նկատմամբ՝ որպես գլոբալ բնապահպանական գործընթացների կարևոր դերակատարի: Հայաստանին այժմ վստահված է կենսաբանական բազմազանության կոնվենցիայի ներքո միջազգային ջանքերի մեկտեղման և առաջմղման պատասխանատու աշխատանքը՝ նպաստելու մարդկության դեմ ծառացած ներկա բնապահպանական մարտահրավերների հաղթահարմանը:

Կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը (COP17) կայանալու է Երևանում 2026 թվականին:

ՄԱԿ-ի Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիան բնապահպանական երեք գլոբալ կոնվենցիաներից մեկն է, որը կարգավորում է միջազգային հանրության ջանքերը շրջակա միջավայրի կենսունակության, կենսաբանական բազմազանության պահպանման, վերականգնման և բնական ռեսուրսների կայուն օգտագործման ոլորտում: Կոնվենցիայի ներքո կողմերի համաժողովները բնապահպանական խոշորագույն միջոցառումներից են: Դրանք կազմակերպվում են երկու տարին մեկ, որոնց ընթացքում անդամ երկրներն աշխատանքներ են տանում կոնվենցիայի կիրարկման համար համապատասխան մեխանիզմների մշակման և այդ նպատակով նոր հանձնառությունների ստանձման ուղղությամբ: Կոնվենցիայի համաժողովներին լայն մասնակցություն են ունենում քաղաքացիական հասարակության, մասնավորապես՝ ոչ կառավարական կազմակերպությունների, բնիկ ժողովուրդների, ակադեմիական շրջանակների, կանանց կազմակերպությունների, երիտասարդության, մասնավոր հատվածի ներկայացուցիչները:



Հայաստանը պատրաստվում է հյուրընկալել բնապահպանական ամենակարևոր իրադարձություններից մեկը՝ COP17-ը

2025-ի մայիսին տարբեր մայրցամաքներից ժամանած փորձագետներն ու առաջնորդները համախմբվեցին Երևանում մասնակցելու «Կայուն զարգացում. կամուրջ՝ Բրազիլիայում անցկացվող COP30-ի և Հայաստանում անցկացվող COP17-ի միջև» համաժողովին, Հայաստանը դարձավ ոչ միայն տարածական, այլև խորհրդանշական կամուրջ:

Միջոցառման նախաձեռնողը Եվրոպական Բիզնես Ասոցիացիան էր (EBA), որը նպատակ ուներ ոչ միայն քննարկել աշխարհի համար կենսական նշանակություն ունեցող բնապահպանական խնդիրները, այլև՝ միավորել բոլոր շահագրգիռ կողմերին՝ կառավարությունից մինչև տեղական համայնքներ:

Կայուն զարգացումը մոլորակի գոյության հարցն է: Քննարկել, թե ինչպես այս ճանապարհը անցնենք միասնական և խելամիտ, նորարար ու համարձակ մոտեցումներով՝ մասնակից երկրների գերնպատակն է:

Կլիմայական փոփոխությունները՝ որպես մարդկության գլխավոր մարտահրավեր

Բնապահպանական այս միջազգային շարժումը սկիզբ առավ դեռևս 1992-ին՝ Ռիո դե Ժանեյրոյի գագաթնաժողովում: Այդ ժամանակ աշխարհի գրեթե բոլոր երկրները միավորեցին իրենց ձայները և ստորագրեցին ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիան (UNFCCC)՝ պարտավորվելով գործել հանուն կլիմայական պայմանների հավասարակշռության:

1995 թվականին Բեռլինում կայացավ առաջին COP-ը՝ Կողմերի համաժողովը: Ամեն տարի անցկացվող այս միջոցառումները դարձել են համաշխարհային մակարդակով ուղղություն թելադրող ելակետեր՝ կլիմայական մարտահրավերների հանդեպ մարդկության պատասխանատվության համար:

Ռիոյում նույն տարվա ընթացքում ընդունվեց նաև մեկ այլ, թերևս նույնքան կարևոր փաստաթուղթ՝ Կենսաբազմազանության մասին կոնվենցիան (CBD): Այս փաստաթուղթը երեք հիմնասյուն ունի՝

1. *կենսաբազմազանության պահպանություն*
2. *կայուն օգտագործում*
3. *գենետիկ ռեսուրսներից բխող օգուտների արդար բաշխում:*

Ի տարբերություն կլիմայական COP-երի՝ կենսաբազմազանության կողմերի համաժողովները (CBD COP) անցկացվում են 2 տարին մեկ՝ կենսական աշխատանք կատարելով բնության բազմազանության խոցելիության ուղղությամբ:

Բեզոարյան այծ
Գրանցված է
ՀՀ կարմիր գրքում

Հայաստանը՝ բնության կենդանի լաբորատորիա

2026 թ.-ի Հայաստանը հյուրընկալելու է CBD-ի 17-րդ Կողմերի համաժողովը (COP17), ինչը բացառիկ իրողություն է ոչ միայն Հայաստանի, այլ ամբողջ Հարավային Կովկասի համար. առաջին անգամ տարածաշրջանը կդառնա կենսաբազմազանության գլոբալ ուշադրության կենտրոն:
Հայաստանում կարելի է հանդիպել մի քանի կլիմայական գոտիների, եզակի էնդեմիկ տեսակների ու հարուստ էկոհամակարգերի, որոնք գոյատևում են իրարից մի քանի կիլոմետր հեռավորությամբ:

2026 թվականի Երևանյան համաժողովը լինելու է միջանկյալ օղակ՝ մի կողմից Ամազոնում կայանալիք COP30 կլիմայական գագաթնաժողովի, մյուս կողմից՝ կենսաբազմազանության ներկա խնդիրների միջև:

Ամազոնը, որպես աշխարհում ամենամեծ անտառային տարածք, Հայաստանը, որպես կենսաբազմազանության էպիկենտրոն, միավորված են մեկ նպատակով. աշխարհին հիշեցնելու բնության մասին և պաշտպանելու այն: Հայաստանը կարող է դառնալ հարթակ, որտեղ կկայանա կարևոր խոսակցություն՝ մարդկության և բնության հետագա համակեցության մասին:

Հեղինակ՝ Լիլիթ Իսրայելյան

Հ. Գ. Բնությունը մեր բոլորի հոգատարության կարիքն ունի, որը պետք է դրսևորվի ամենօրյա սովորական գործողությունների տրամաբանությամբ. ծխախոտի մնացորդը գետնին չնետելով, բնության գրկում հանգստանալուց հետո՝ առնվազն հետք չթողնելով...

Սա թերևս ամենատարրական պահանջներն են, որոնց պետք է անվերապահորեն հետևել:

Հանքարդյունաբերություն՝ ոչ միայն ընկերություններ, այլ նաև՝ պետություններ ստեղծող ոլորտ

Թերենս (Սրապ) Օրթսլանի դասախոսությունը Հայաստանում
Արդյունաբերության փորձագետ, ICMA-ի համահիմնադիր (Կանադա)

«Հայաստանի լրջագույն հիմնախնդիրներից մեկը երիտասարդների արտագաղթն է՝ օտար երկրներում հնարավորություններ գտնելու մղումով: Մինչդեռ, ըստ Սրապ Օրթսլանի, հանքարդյունաբերության ոլորտը կարող է դառնալ երիտասարդ տաղանդների պահպանման հիմնաքարը, այս ոլորտը կարող է նվազեցնել արտագաղթը՝ առաջարկելով հետաքրքիր, կարևոր ու շահութաբեր աշխատանք նոր սերնդի մասնագետներին»,- կարծում է է հանքարդյունաբերության ոլորտում հեղինակավոր ձայն ունեցող՝ արդյունաբերության փորձագետ, ICMA-ի համահիմնադիր (Կանադա) Թերենս (Սրապ) Օրթսլանը:

Նրա խոսքերով, այս ընդգրկուն ոլորտը առաջարկում է զբաղվածություն՝ ներառելով ոչ միայն գիտությունը և ճարտարագիտությունը, այլև ֆինանսները, իրավունքը, կենսաբանությունը, բնապահպանությունն ու սոցիալական քաղաքականությունը:

Կարիերայի օրվա շրջանակներում՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում ներկայացված նրա շնորհանդեսի հիմնական ուղերձն այն էր, որ Հայաստանը պետք է բնական ռեսուրսների համաշխարհային շուկայի պահանջարկի նկատմամբ դրսևորի ռազմավարական դիրքորոշում, քանի որ համաշխարհային գերտերությունները, ինչպիսին, օրինակ, Չինաստանն է, մետաղների առաջնային սպառման մեջ գերիշխում են, և այնպիսի տարածաշրջաններ, ինչպիսիք են զարգացող Ասիան և Աֆրիկան, դառնում են պահանջարկի նոր կենտրոններ: Գլոբալիզացիայի դարաշրջանը թուլանում է. տարածաշրջանային դաշինքները և ռեսուրսների անվտանգությունը դուրս են գալիս առաջին պլան: Այս նոր իրավիճակում՝ Եվրոպայի, Ասիայի և Մերձավոր Արևելքի խաչմերուկում գտնվող Հայաստանի համար, դա տարածաշրջանային ռեսուրսների դիվանագիտության և մատակարարման շղթաներում կարևոր դերակատար դառնալու մեծ մարտահրավեր է: Բանախոսը ուսանողներին հիշեցրեց, որ բնական ռեսուրսները, որոնք առատ են աշխարհի տարբեր հատվածներում, հավասարապես չեն բաշխված: «Կարևոր է, որ բնական ռեսուրսները պատկանում են ժողովրդին, և ընդերքը կառավարվում է կառավարությունների կողմից: Հայաստանում սա և՛ պատասխանատվություն է, և՛ բացառիկ հնարավորություն», - ընդգծեց նա:

Մետաղների արագ աճող պահանջարկը

Կարևոր է հաշվի առնել մետաղների արագ աճող պահանջարկը, որը պայմանավորված է դեպի «կանաչ էներգիա» անցումով, հատկապես դա էական է, օրինակ, էլեկտրական մեքենաշինության ոլորտի համար, որը մեծապես կախված է պղնձից, լիթիումից և հազվագյուտ ռեսուրսային այլ էլեմենտներից: Հայաստանի երկրաբանական բազմազանության և հանքարդյունաբերական բազմամյա ժառանգության շնորհիվ իրական հնարավորություն կա նպաստելու համաշխարհային գլոբալ նպատակներին՝ միաժամանակ կառուցելով կայուն ներքին տնտեսություն:

Հայաստանը ևս ունի թերուսումնասիրված հանքավայրեր և բազմատեսակ բնական ռեսուրսներ: Թեև Հայաստանը չունի օվկիանոսային տարածք,

սակայն բնական ռեսուրսների առումով, այն կարող է դառնալ հետազոտության, քաղաքականության մշակման և տարածաշրջանային համագործակցության կենտրոն՝ պատասխանատու հանքարդյունաբերական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Հանրային թյուրընկալումը հանքարդյունաբերության վերաբերյալ

Պարոն Սրապի դասախոսության ամենաազդեցիկ պնդումներից մեկն այն է, որ հանքարդյունաբերությունն ավելին է, քան միայն շահույթը, այն անգամ պետականաստեղծ ոլորտ է: Նա ներկայացրեց գլոբալ տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ հանքարդյունաբերության ոլորտը, ի հակադրություն հանրային թյուրընկալման, ապահովում է բնակչության մահացության ամենացածր ցուցանիշները՝ շնորհիվ առողջության պահպանման, անվտանգության և բնապահպանական կանոնակարգերի և արձանագրությունների իրականացման ու առաջընթացի:

Հայաստանն այս առումով կարող է օրինակելի դառնալ: Համապատասխան կանոնակարգերի պահպանման, թափանցիկության և համայնքի ակտիվ ներգրավվածության դեպքում, ոլորտը կարող է ստեղծել բարձր վարձատրվող աշխատատեղեր, ֆինանսավորել կրթությունն ու ենթակառուցվածքները, խթանել բնապահպանությունն ու առողջապահությունը, և Հայաստանի ամենապայծառ ուղեղները՝ երիտասարդներին, պահել տանը՝ նոսրացնելով արտագաղթի հոսքը:

Ժամանակակից հանքարդյունաբերությունը պահանջում է ավելին, քան հանքային մասնագետներն են՝ ինժեներներն ու երկրաբանները: Այսօր հանքարդյունաբերությունը կարիք ունի գաղափարների, մտածողների, պլանավորողների, քաղաքականություն մշակողների և հաղորդակցողների:

Հայացք դեպի առաջ. ինչ պետք է անի Հայաստանը

Այս տեսլականը կյանքի կոչելու համար բանախոսն առաջարկում է.

- *Կրթության բարեփոխում, որը նախապատրաստում է միջդիսցիպլինար մասնագետների:*
- *Պետական և մասնավոր հատվածի համագործակցություն՝ հետախուզումն ու շահագործումը զարգացնելու և արագացնելու համար:*
- *Թափանցիկ կառավարում՝ ռեսուրսներն ազգային երկարաժամկետ շահերին նպատակաուղղված օգտագործելու համար:*
- *Սփյուռքի ակտիվ ներգրավվածություն՝ համաշխարհային փորձ, տեխնոլոգիաներ և ներդրումներ ներգրավելու համար:*

Վերջնական եզրահանգում.

Հայաստանի հանքարդյունաբերության և մետաղների ոլորտը անցյալի մասունք չէ, հակառակը՝ այն կամուրջ է դեպի ապագա: Ճիշտ քաղաքականության և լավ մասնագետների առկայության դեպքում, այն կարող է շարժիչ ուժ հանդիսանալ Հայաստանի տնտեսական անկախության և տարածաշրջանային առաջնորդության համար:

«Հանքարդյունաբերության և մետաղների աշխարհը՝ անցյալի, ներկայի և ապագայի կտրվածքով» խորագրով՝ Սրապ Օրթսլանի շնորհանդեսը համոզիչ ակնարկ էր այն մասին, թե ինչպես Հայաստանը կարող է ինքնահաստատվել համաշխարհային զարգացող հանքարդյունաբերության և մետաղական ռեսուրսների լանդշաֆտում: Մեր օրերում հանքագործական արդյունաբերությունը դիրքավորվում է ոչ միայն որպես տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը, այլ նաև որպես պետության զարգացման հնարավորություն: Եվ այս կարևոր ուղերձն առաջին հերթին ուղղված է ուսանողներին, երիտասարդ մասնագետներին, որոնք կարող են կառուցել իրենց կայուն ապագան հայրենիքում, նպաստել երկրի բարգավաճմանը՝ զարգացնելով հանքարդյունաբերության ոլորտը:

Bauma 2025 ցուցահանդեսում Komatsu-ն նորից զարմացրեց՝ PC7000-11E էլեկտրական հիդրավլիկ էքսկավատորով

Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր **Komatsu PC7000-11E էքսկավատորի վերաբերյալ տեսանյութը**

Արտադրական և հանքային տեխնիկայի խոշորագույն՝ Bauma միջազգային ցուցահանդեսում այս տարի Komatsu ընկերությունը ներկայացրեց իր նորագույն էլեկտրական հիդրավլիկ PC7000-11E էքսկավատորը: Այն նախատեսված է ծանր հանքարդյունաբերական աշխատանքների համար: Մեքենան համալրված է երկու գերհզոր էլեկտրական շարժիչներով, որոնք լիարժեք փոխարինում են դիզելային շարժիչներին՝ զրոյական վնաս պատճառելով բնությանը:

Հիմնական Տեխնիկական Բնութագրեր

Շարժիչի հզորություն – *2 × 1250 կՎտ / 2 × 1675 ձիաուժ*
Գործառնական քաշ – *678 – 699 տոննա*
Շերեփի տարողություն – *44 մ³*

Անվտանգության բարձրագույն նորմերին համապատասխանող էքսկավատորը համալրված է միանգամից երեք վթարային ելքերով, իսկ տեսողական նորագույն համակարգը կատարյալ տեսադաշտ է ապահովում, ինչը հեշտացնում է օպերատորի աշխատանքը:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅՈՒՄ

Քիմիական նյութերի լաբորատորիայում պետք է աշխատել արտահագուստով, ձեռնոցներով և ակնոցով:

ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

- Սնունդ ընդունել, խմել
- Շամտեսել, հոտ քաշել
- Քիմիական նյութերը պահել սննդամթերքի կողքին
- Քիմիական նյութը ձեռքով վերցնել, տեղափոխել





!

Նյութերի հոտը որոշելու նպատակով արգելվում է անոթը մոտեցնել դեմքին, այլ պետք է ձեռքի ափով շարժում կատարել անոթի բերանից դեպի քիթը:

ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

- Բաց թողնել հեղուկով լի սրվակները կամ չոր Նյութերի տարրաները
- Օգտագործել անհայտ նյութեր
- Մշակված ռեակտորները լցնել լվացարանի կամ զուգարանակոնքի մեջ

ԱՇԽԱՏԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ.

- Կարելի է օգտագործել միայն այն նյութերը, որոնց սրվակի վրա գրված է նյութի անունը:
- Փորձեր կատարելիս անհրաժեշտ է օգտագործել մաքուր լաբորատոր անոթներ:
- Աշխատելիս նյութերը չի կարելի թափել ձեռքերին և հագուստին, հատկապես հիմքերը և թթուները:
- Թթուները ջրով նոսրացնելիս (հատկապես խիտ ծծմբական թթուն) անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնը. նախ ջուրը՝ ապա թթուն: Թթուն պետք է բարակ շիթով և դանդաղ լցնել սառը ջրի մեջ՝ խառնելով: